JULY - DECEMBER 2018

ՀՈՒԼԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

NEWSLETTER

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia
Պարոնյան 21/1 Paronyan
Armenian Red Cross Society
Հայկական Կարմիր խաչի ընկերություն

redcross@redcross.am
www.redcross.am

Մարդասիրության հզոր ուժը. Հիշատակի միջոցառում՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցին

Դեկտեմբերի 6-ին Կամերային երաժշտության տանը Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կազմակերպել էր Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցին նվիրված «Մարդասիրության հզոր ուժը» խորագրով հիշատակի միջոցառում՝ ոգեկոչելու աղետի անմեղ զոհերի հիշատակը, նշելու մարդասիրության հզոր ուժը և երախտագիտության խոսք հղելու միջազգային հանրությանն ու Կարմիր խաչի միջազգային շարժման ընտանիքին՝ աղետից հետո ցուցաբերած անգնահատելի մարդասիրական աջակցության համար: Միջոցառման ընթացքում ցուցադրվեցին Կարմիր խաչի միջազգային շարժման արձագանքը նկարագրող ֆիլմ և լուսանկարներ, ելույթ ունեցան «Փարոս» երգչախումբը և «Հայաստանի փոքրիկ երգիչները»:

Ներկաներին իր ուղերձն էր հղել նաև ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, որը փոխանցեց նրա օգնական Գագիկ Նահապետյանը: Ելույթ ունեցավ նաև ԿԽՄՖ Եվրոպական տարածաշրջանի ղեկավար Սայմոն Միսիրին:

ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության անունից շնորհակալագրեր հանձնեց Ավստրիական, Գերմանական, Դանիական, Իտալական, Շվեյցարական, Ֆիննական, Նորվեգական Կարմիր խաչերի, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների ֆեդերացիային և Կարմիր խաչի միջազգային կոմիտեին՝ երկրաշարժից հետո Հայաստանին և հայ ժողովրդին անգնահատելի մարդասիրական աջակցություն տրամադրելու համար: Շնորհակալագրեր ուղարկվեցին նաև Ամերիկյան, Ռուսական, Ճապոնական, Ֆրանսիական, Շվեդական, Իսպանական Կարմիր խաչերին: Միջոցառմանը ներկա էին պետական այրեր, միջազգային և տեղական կազմակերպությունների ղեկավարներ, դեսպաններ:

The strong Power of Humanity. Commemoration event dedicated to the 30th Anniversary of Spitak Earthquake

On 6 December, Armenian Red Cross Society organized a commemoration event titled "The Strong Power of Humanity" dedicated to the 30th anniversary of the Spitak Earthquake, to commemorate the innocent victims of the disaster, to celebrate the great power of humanity and express gratitude to the international community and the International Movement of the Red Cross for the invaluable humanitarian assistance provided to the affected population after the disaster. During the event a film featuring the the Red Cross response was screened, thematic photo exhibition was opened, Paros Chamber Choir and the "Little Singers of Armenia" performed.

The President of Armenia Armen Sargsyan also sent a message to the audience, which was announced by his assistant Gagik Nahapetyan. The head of the IFRC European Region, Simon Missiri also delivered a speech.
ARCS President Mkhitar Mnatsakanyan on behalf of the Armenian Red Cross Society handed over letters of gratitude to the Austrian, German, Danish, Italian, Swiss, Finnish, Norwegian Red Crosses, the International Federation of Red Cross and Red Crescent Societies and the International Committee of the Red Cross for provided invaluable humanitarian assistance to Armenia and the Armenian people after the earthquake. Letters of gratitude have been sent also to the American, Russian, Japanese, French, Swedish and Spanish Red Crosses. State officials, heads of international and local organizations, ambassadors attended the event.

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանն այցելեց ՀԿԽԸ բարեգործական ճաշարան

Դեկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանն այցելեց Արարատի մարզի Մասիս քաղաք՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) բարեգործական ճաշարանից օգտվող միայնակ անապահով տարեցների և անապահով ընտանիքների Նոր տարին շնորհավորելու համար: Նրան դիմավորեցին ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը, ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, Մասիս քաղաքապետ Դավիթ Համբարձումյանը, փոխքաղաքապետերը:

ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը ողջունեց ներկաներին:
ՀՀ նախագահը ևս ողջունեց ճաշարանի այցելուներին՝ ասելով.
- Ինձ սովորեցրել են, որ իմ ունեցածով կիսվեմ ուրիշների հետ: Եթե մենք չկիսենք մեր ուրախությունն ու հաջողությունը, մեր դժվարությունները կիսող չի լինի: Ես վստահ եմ, որ լավատեսությունն ու հույսը կորցնել չի կարելի, և պետք է հավատանք, որ 2019 թվականն ավելի լավն է լինելու, իսկ 2020-ը՝ էլ ավելի լավը: Մենք էլ շնորհակալ ենք Կարմիր խաչին, և բոլոր նրանց, ովքեր ձեր կողքին են, և հնարավորինս թեթևացնում են ձեր հոգսը: Ես ևս կօգնեմ ձեզ ինչով կարող եմ, հատկապես պատրաստ եմ աջակցել երեխաներին:

ՀՀ նախագահի կողմից՝ Նոր տարվա կապակցությամբ, շահառուներին հանձնվեցին սննդի փաթեթներ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ, 2017թ. հուլիսից բարեգործական ճաշարան գործարկեց Արարատի մարզի Մասիս քաղաքում: Այս նախաձեռնության շնորհիվ 85 տարեցներ ոչ միայն ապահովված են տաք, սննդարար ճաշով և հնարավորություն ունեն ամեն օր շփվել միմյանց հետ, այլև շրջապատված են ՀԿԽԸ կամավորների ու անձնակազմի ջերմությամբ ու հոգատարությամբ:

Armen Sarkissian, the President of the RA visited the ARSC Soup Kitchen in Masis

On 30th December, Armen Sargsyan, President of the Republic of Armenia visited the soup kitchen of Armenian Red Cross Society (ARCS) in Masis city, Ararat region to congratulate beneficiary lonely elderly people and families in need on the occasion of New Year. Mkhitar Mnatsakanyan, ARCS President, Anna Yeghiazaryan, ARCS Secretary General, Davit Hambardzumyan, Mayor of Masis and the deputy mayors greeted him on the site.

Mkhitar Mnatsakanyan welcomed the guests, and the President of Armenia also welcomed the visitors of the soup kitchen, saying:"I have been taught to share with others everything I have. If we do not share our happiness and success, nobody will share our difficulties. I believe, that optimism and hope can not be lost, and we must believe that 2019 will be better, and 2020 will be even better. We are also grateful to the Red Cross and to all those who are with you and, alleviate your sufferings, as much as possible, I will help you with everything I can, I am ready to support especially children.

On the occasion of the New year, beneficiaries received food packages from the President.

In July 2017, Armenian Red Cross Society, supported by the Swiss Red Cross, set up a soup kitchen in Masis, Ararat Region. Thanks to this initiative, 85 elderly people are not only provided with hot, nutritious meal and have the opportunity to interact with each other every day, but are also surrounded by the warmth and care of the ARCS volunteers and staff.

Մեկնարկեց «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» ծրագիրը

Հուլիսի 18-ին մեկնարկեց «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» ծրագիրը ("Increased Resilience of Syrian Armenians and Host Population" (IRIS) Programme): Մեկնարկի միջոցառմանը ներկա էին ՀՀ Սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանը, Ն.Գ. պարոն Պյոտր Անտոնի Սվիտալսկին՝ Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան, Հայկական Կարմիր խաչի ընկերության գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, Ավստրիայի զարգացման գործակալության Գրասենյակի տնօրենի տեղակալ Նորա Ալանակյանը և Ավստրիական Կարմիր խաչի Միջազգային կապերի բաժնի ղեկավար Ուոլթեր Հայեկը:
2018 թվականի հուլիսից մինչև 2021 թվականի հունիսը, IRIS ծրագրի շնորհիվ կբարելավվի Ինտեգրացիայի ազգային քաղաքականությունը, որն ուղղված է Հայաստանում սիրիահայերի արժանապատիվ կյանքի ապահովմանը՝ ամբողջական պաշտպանության և ինտեգրման միջոցով: Դա կիրագործվի սիրիահայերի և տեղացիների սոցիալական և տնտեսական դիմակայունության բարելավման, ինչպես նաև Հայաստանի տնտեսական աճի համար ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման միջոցով: Այն իրականացվում է Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ), Հայկական Կարիտասի, ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի, Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնի կողմից՝ համընկերությամբ:
Սա նշանակում է. մոտ 9000 սիրիահայերի համար բարելավել առկա առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիությունը, բերալավել մոտ 300 ընտանիքների բնակարանային պայմանները, ընդլայնել 200 ձեռներեցի տնտեսական հնարավորությունները, և նպաստել Հայաստանի հասարակության մեջ ավելի քան 3000 երեխաների ինտեգրմանն ու դիմակայունությանը:

Ավստրիական Կարմիր խաչի ղեկավարման ներքո իրականացվող ավելի քան 3.300.000 Եվրո ընդհանուր բյուջեով: ԻՐԻՍ ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության տարածաշրջանային թրասթ ֆոնդ՝ «Մադադ»-ի, Ավստրիական զարգացման համագործակցության և Ավստրիական Կարմիր խաչի կողմից:

Հաշվի առնելով սիրիահայ փախստականներին աջակցելու բազմակողմանի փորձառությունը, ծրագիրը կիրականացնեն Հայկական Կարիտասը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնը և ՓՄՁ համագործակցության ասոցիացիան:

Launch of the Programme "Increased Resilience of Syrian Armenians and Host Population" (IRIS)

On 18 July, ("Increased Resilience of Syrian Armenians and Host Population" (IRIS) Programme launched. Mkhitar Hayrapetyan, RA Minister of Diaspora and HE. Piotr Antoni Świtalski, Ambassador Extraordinary and Plenipotentiary, Head of EU Delegation to Armenia, Anna Yeghiazaryan, ARCS Secretary General, Ms. Nora Alanakyan, Dep. Head of Office, Austrian Development Agency (ADA) and Mr. Walter Hajek, Head of International Cooperation, Austrian Red Cross (AutRC) attended the event.

Starting from July 2018 till June 2021 the programme will contribute to the National Integration Policy that intends to guarantee a dignified life for Syrian Armenians in Armenia through full protection and integration. It will be implemented by improving social and economic resilience of Syrian Armenians and host population and strengthening institutional capacities for economic growth in Armenia.

The programme is being implemented by Armenian Red Cross Society (ARCS), Armenian Caritas, SME Cooperation Association, Centre for Coordination of Syrian Armenians' Issues. Save the Children is an Associate Partner.

Results: 9'000 Syrian Armenians better informed on existing services; 1'100 Syrian Armenians and local Armenians to benefit from improved psychological and social well-being; 720 Syrian Armenians to benefit from housing support; 200 entrepreneurs supported with business plans and trainings; 3'000 children and youth reached with integration activities; 360 teachers trained in psychological First Aid.

With an overall budget of EUR 3.300.000 and lead by the Austrian Red Cross. IRIS program me is funded by European Union Regional Trust Fund 'Madad', Austrian Development Cooperation, Austrian Red Cross.

Building on extensive experience in support of Syrian Armenian refugees, the programme is implemented by Armenian Caritas, Armenian Red Cross Society, Centre for Coordination of Syrian Armenians' Issues NGO and the SME Cooperation Association.

Մեկնարկեց «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ աշխատունակության խթանման» ծրագիրը

- Ես Անահիտն եմ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքից՝ Երիտասարդական ակումբի պատասխանատուն: Ինչպես Հայաստանի այլ քաղաքներում, Սևանում բնակվող երիտասարդներն էլ ունեն շատ խնդիրներ: Մեր քաղաքին այս ծրագիրն անհրաժեշտ է, այն հնարավորություն կտա հասկանալ, թե մեր քաղաքի երիտասարդներն ինչ կարիքներ ունեն, և ըստ այդմ կփորձենք նրանց օգնել:

Անահիտը, Գայանեն, Մերին ու Սոֆին Հայկական Կարմիր խաչի ընկերության Սևանի, Դիլիջանի, Իջևանի ու Գավառի կամավորներ են, որոնք ներգավված են «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ աշխատունակության խթանման» ծրագրում և առաջնորդելու են իրենց քաղաքների Երիտասարդական ակումբները:

«ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ աշխատունակության խթանման» ծրագիրն իրականացվելու է մինչև 2021թ. և ներառելու է սահմանափակ հնարավորություններով 16-30 տարեկան 4000 երիտասարդների Գեղարքունիքի և Տավուշի մարզերում՝ այդ թվում նաև հաշվարկային տվյալներով խոցելի 300 երիտասարդի, ովքեր կրում են զինված հակամարտության և արտագնա աշխատանքի բացասական հետևանքները:

«ԵՄ-ն հանուն երիտասարդության» նախաձեռնության շրջանակներում իրականացվող ծրագիրը կազմվել է Դանիական Կարմիր խաչի կողմից՝ Հայկական, Վրացական և Բելառուսական Կարմիր խաչի ազգային ընկերությունների հետ համագործակցությամբ: Ծրագրի նպատակն է սահմանափակ հնարավորություններով երիտասարդների շրջանում խթանել կրթություն ստանալու և աշխատելու հնարավորությունները: Հայաստանում ծրագիրը ներառելու է սահմանափակ հնարավորություններով 16-30 տարեկան 4000 երիտասարդների Գեղարքունիքի և Տավուշի մարզերում՝ այդ թվում նաև հաշվարկային տվյալներով առավել խոցելի 300 երիտասարդի, ովքեր տուժել են զինված հակամարտության և արտագնա աշխատանքի բացասական հետևանքներից: Մոտ 60 երիտասարդ խորհրդատվական և տեխնիկական աջակցություն կստանան՝ սեփական բիզնես գաղափարներն իրականացնելու համար: Կարմիր խաչի 100 կամավոր, պետական և ուսումնական հաստատությունների, աշխատանքի տեղավորման գործակալությունների ու բաժանմունքների, հասարակական և կորպորատիվ կազմակերպությունների 70 ներկայացուցիչ ակտիվորեն կմասնակցեն ծրագրի պլանավորման, իրականացման, մոնիտորինգի և փորձի փոխանակման գործընթացներին:

Launch of EU4Youth: Fostering potential for greater employability project

"I am Anahit, from Sevan, Gegharkunik. I am responsible for the Youth Club. Like other cities of Armenia, Sevan residents have many problems. Our city needs this project, it will give an opportunity to understand what our young people need and try to help them".

Anahit, Gayane, Mary and Sofi are volunteers of the Armenian Red Cross Society from Sevan, Dilijan, Ijevan, and Gavar, which are involved in the EU4 Youth fostering potential for greater employability program and lead the Youth Clubs of their towns.

The project under the EU4Youth initiative has been developed by the Danish Red Cross (Dansk Rode Kors) and its partners in co-applicants Belarus Red Cross Society, Armenia Red Cross Society, and Georgia Red Cross Society. The project will improve education and employment opportunities for disadvantaged youth groups. In Armenia, the project will involve 4000 disadvantaged young people aged 16-30 years in Tavush and Gegharkunik regions of which 300 are expected to be acutely vulnerable such as young men affected by conflict or labour migration. 60 young women and men will be supported with their business ideas.

100 Volunteers from Red Cross and partners, and 70 representatives from government institutions, education and labour departments, NGOs and private sector will also benefit from the project.

Կարմիր խաչի միջազգային շարժումը շարունակում է համախմբված գործել

Դեկտեմբերի 5-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ Գործընկերների հանդիպում, որին մասնակցում էին Ավստրիական, Գերմանական, Դանիական, Իտալական, Շվեյցարական Կարմիր խաչերի, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգայիին ֆեդերացիայի (ԿԽՄՖ) և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) ներկայացուցիչները:

ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը ներկայացրեց Ազգային ընկերության գործունեությունը, վերջին երկու տարիների ծրագրերն ու ձեռքբերումները, մարտահրավերներն ու դժվարությունները, ինչպես նաև հետագա պլաններն ու ծրագրերը:

Գործընկեր Ազգային ընկերությունների, ինչպես նաև ԿԽՄԿ և ԿԽՄՖ ներկայացուցիչները, բարձր գնահատելով իրականացված աշխատանքը, պատրաստակամություն հայտնեցին ընդլայնելու Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ համագործակցության շրջանակները՝ շարունակելով Շարժման կարողությունները ծառայեցնել խոցելի խմբերի մարդասիրական կարիքների բավարարմանը:

Հանդիպման մասնակիցները կմասնակցեն նաև Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցին նվիրված «Մարդասիրության հզոր ուժը» հիշատակի միջոցառմանը:

Առաջին օգնություն՝ հանրային միջոցառումների ժամանակ

Սեպտեմբերի 21-ին՝ Անկախության օրվան, հոկտեմբերի 7-ից 12-ը՝ Հայաստանում անցկացվող ֆրանկոֆոնիայի միջոցառումների ամբողջ ընթացքում, ժամը 12:00-ից 20:00-ը, Հանրապետության և Ազատության հրապարակներում գործել են Հայկական Կարմիր խաչի ընկերության Առաջին օգնության տաղավարները, որտեղ, անհրաժեշտության դեպքում, հատուկ պատրաստվածություն անցած թիմն ու կամավորները առաջին օգնություն են ցուցաբերել քաղաքացիներին, ինչպես նաև խմելու ջուր տրամադրել տարեցներին ու երեխաներին: Առաջին օգնություն է ցուցաբերվել ավելի քան 1000 քաղաքացու:

Red Cross International Movement continues consolidated actions

On 5 December, Partnership Meeting took place at the Armenian Red Cross Society (ARCS) Headquarters with the participation of the representatives from Austrian, German, Danish, Italian, Swiss Red Crosses, International Federation of Red Cross and Red Crescent (IFRC) and International Committee of the Red Cross.

Dr. Anna Yeghiazaryan, ARCS Secretary General presented the National Society's activities, programmes and achievements of the recent two years, challenges and difficulties, as well as plans and projects for future.

The representatives of the National Societies, the ICRC and IFRC, highly appreciated the work done, and express their willingness to enlarge the frames of cooperation with Armenian Red Cross Society, to consolidate all the capacities of the Movement to serve the humanitarian needs of the most vulnerable groups.

The participants will attend the Commemoration event titled "The Strong Power of Humanity", organized by Armenian Red Cross Society, dedicated to the 30th years of Spitak earthquake.

First Aid at Public events

On 21 September, on the Independence Day in Republic Square and on 7 – 12 October, Francophonie Days events, in Freedom square, First Aid points were placed, where specially trained volunteers were ready to help those in need of urgent help, and distribute drinking water to elderly people and children. More than 1000 people approached the First Aid points to receive assistance.

Առաջին օգնության մրցումներ Տավուշում

Նոյեմբերի 9-ին տեղի ունեցան մրցումներ՝ որտեղ մրցեցին ԱԻՆ քաղպաշտպանության 11 սահմանամերձ համայնքների թիմերը: Ազատամուտ, Չինարի, Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր, Պառավաքար, Կոթի, Սարիգյուղ, Ոսկեվան, Բերդավան, Այգեպար և Չորաթան համայնքների թեժ պայքարում հաղթող ճանաչվեց Մովսեսի քաղպաշտպանության թիմը:

Կյանք փրկող գիտելիք

Պատկերացնու՞մ եք, որ ձեր արագ գործողություններից կարող է կախված լինել ինչ-որ մեկի կյանքը: Իսկ գիտե՞ք՝ ինչ անել ուժեղ արյունահոսության կամ կոտրվածքի դեպքում, ինչպե՞ս ճիշտ Առաջին օգնություն ցույց տալ: Այս գիտելիքը կարևոր է բոլորի, հատկապես՝ խոցելի համայնքների բնակիչների համար, և Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ, արդեն մի քանի տարի է, ինչ Առաջին օգնության դասընթացներ է անցկացնում սահմանամերձ համայնքներում:

Իջևանում՝ հուլիսի 20-ին Տավուշի սահմանամերձ 10 համայնքների՝ Բարեկամավանի, Դովեղի, Այգեհովիտի, Վազաշենի, Ներքին Ծաղկավանի, Կիրանցի, Սևքարի, Բաղանիսի, Բերքաբերի, Ոսկեպարի կամավորական թիմերն իրենց՝ դասընթացների ժամանակ ձեռք բերած հմտությունները ցուցադրեցին Առաջին օգնության տարածաշրջանային մրցումներում: Արդյունքում հաղթող ճանաչվեց Ոսկեպարի թիմը, 2-րդ տեղում էր Վազաշենը, 3-րդում՝ Այգեհովիտը: Մրցանակներ ստացան նաև Լավագույն Առաջին օգնողը, Թիմի ավագն ու Նմանակողը:

First Aid competition in Tavush

On 9 November, First Aid competition took place between MES Civil Defense teams of 11 bordering communities. In tough competition between Azatamut, Chinari, Movses, Nerkin Karmiraghbyur, Paravakar, Koti, Sarigyugh, Voskevan, Berdavan, Aygepar and Choratan communities, Civil Defence team of Movses became the winner.

Live saving skills

Can you imagine, that your quick actions may save someone's live? But, do you know, what to do in case of severe bleeding or fracture? These skills are essential for everyone, especially for those, living in vulnerable communities. Armenian Red Cross Society, with the support of International Committee of the Red Cross, has been conducting First Aid sessions for borderline communities for several years.

On 20 July, 10 volunteer teams from Tavush border communities of Barekamavan, Dovegh, Aygehovit, Vazashen, Nerkin Karmiraghbyur, Kirants, Sevqar, Baghanis, Berqaber and Voskepar competed with each other in Ijevan, presenting the skills obtained at the sessions. Voskepar community volunteer team announced as the winner of the competition, Vazashen took the 2nd place, and Aygehovit was the 3rd. The Best Firs Aid provider, Team Leader and Imitator received prizes as well.

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը մարդասիրական օգնություն տրամադրեց Շիրակի մարզի Առափի, Սառնաղբյուր և Նահապետավան համայնքների՝ կարկուտից առավել տուժած ընտանիքներին

Նոյեմբերի 5-ից՝ Շիրակի մարզի Առափի, Սառնաղբյուր և Նահապետավան համայնքների՝ 2018թ. օգոստոսի 17-ին և 18-ին տեղացած ուժեղ կարկուտի հետևանքով ամենաշատը տուժած 1097 ընտանիք՝ ընդհանուր առմամբ 5012 մարդ, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կողմից ստացավ մարդասիրական օգնություն՝ դրամական աջակցության տեսքով: «Հայբիզնեսբանկի» Գյումրու և Արթիկի մասնաճյուղերի միջոցով այդ ընտանիքների յուրաքանչյուր անդամ ստացավ 22 440 ՀՀ դրամ (ընդհանուր առմամբ՝ 112 469 280 ՀՀ դրամ):

Այս տարի օգոստոսին Շիրակի մարզում տեղացած աննախադեպ ուժեղ կարկուտը ոչնչացրել էր մարզի գրեթե ամբողջ բերքը: Պաշտոնական տվյալներով խիստ տուժել են 11 համայնքների 2202 տնտեսություններ և ավելի քան 780 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր: Աղետի հասցրած ընդհանուր վնասը կազմել է 903.54 միլիոն ՀՀ դրամ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ որպես կառավարությանն աջակցող կազմակերպություն մարդասիրական ոլորտում, տվյալ համայնքերին աջակցելու նպատակով, իրականացրել էր կարիքների գնահատում, որի արդյունքում ամենախոցելի էին համարվել Առափին, Սառնաղբյուրը և Նահապետավանը՝ որպես առավել տուժած համայնքներ (բերքի 80-100 տոկոսը կորցրած): Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ՝ ճշգրտվել և հստակեցվել են առավել տուժած ընտանիքների ցուցակները:

Միջոցներ հայթայթելու նպատակով ՀԿԽԸ-ն համապատասխան ծրագրով դիմել էր Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Աղետներին արձագանքման արտակարգ իրավիճակների ֆոնդին և ստացել 257.134 շվեյցարական ֆրանկ (124 671 419 ՀՀ դրամ) տուժածներին մարդասիրական օգնություն տրամադրելու համար:

Մարդասիրական օգնություն՝ Սիրիայի ժողովրդին

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ), ՌԴ և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունների և Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի համատեղ ջանքերով, հուլիսի 12-ին Սիրիայի Արաբական Հանրապետություն ուղարկեց 94 տոննա մարդասիրական օգնություն՝ սննդի տեսքով (ձեթ, բրինձ և հնդկաձավար): Մարդասիրական բեռն ընդունեց և Սիրիայի ճգնաժամի հետևանքով տուժած բնակչությանը բաշխեց Հայկական Կարմիր խաչի ընկերության գործընկեր Ազգային ընկերությունը՝ Սիրիայի Կարմիր մահիկը: Օգնության 30 տոննան բաշխվել է Հալեպում՝ Հայոց Բերիոյ թեմի առաջնորդության միջոցով:

Armenian Red Cross Society provided humanitarian aid to the families most affected by hailstorm of Arapi, Sarnaghbyur and Nahapetavan communities in Shirak region.

Starting from November 5, 1097 families, most affected by the strong hailstorm, 5012 persons in general, received cash assistance from Armenian Red Cross Society. Each person received AMD 22,440 (in total AMD 112,449,280) through the branches of "Armbusinessbank" Gyumri and Artik.

On August 17 and 18, the hailstorm damaged almost all yield capacity in Shirak region of Armenia. 11 communities with 2,202 households and over 780 hectares of agricultural lands were severely affected, according to the official data. The total damage caused by the disaster amounted to 903.54 million drams.

ARCS role as an auxiliary to the Government in the humanitarian field carried out an assessment of needs, in order to support those communities, as a result, the most affected three communities were selected Arapi, Nahapetavan, Sarnaghbyur community (lost almost 80-100 per cent of crops).

The lists of the most affected families have been clarified in collaboration with regional and local self-governance bodies.

In order to receive funds, the ARCS has applied to the Emergency Response Fund of the International Federation of Red Cross and Red Crescent Societies and has received 257,134 Swiss francs (124 671 419 AMD) to provide humanitarian assistance.

Humanitarian Aid for the people of Syria

With the joint efforts of Armenian Red Cross Society (ARCS), RA and RF Ministries of Emergency Situations and Russian-Armenian Centre of Humanitarian Response, on 12 July, 94 tons of humanitarian aid has been provided to the Syrian Arab Republic in the form of food parcels (oil, rice and buckwheat). The humanitarian cargo will be accepted and redistributed to the population affected by the Syrian crisis by the Syrian Red Crescent, Armenian Red Cross Society's partner National Society. 30 tons of relief will be distributed in Aleppo, through the Armenian Diocese of Beroea.